ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲԻՒՐ 3

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԲԱՑԱՏՐԵԱԼ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

ԳԻՐՔ 3

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼՐԻՒ ՎԵՐԱՆԱՅՈՒԱԾ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ԵՒ ՆՈՐ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ա.- ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱՎԱՅՐ 7

1. ԳԻՔՈՐ - Յովհաննէս Թումանեան 8
- Լեզուական-Գործնական Աշխատանք

2. ԵՐԳԻՇԱԲԱՆԻՆ ՉԵՌԱՏԵՏՐԸ - Յակոբ Պարոնեան 13

3. ԱՐԱԶԸ - Աւետիս Ահարոնեան 17
- Լեզուական-Գործնական Աշխատանք

4. ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ - Արփիար Արփիարեան 24
- Լեզուական-Գործնական Աշխատանք

5. ԱՌԱՋԱՐԿ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻՆ - Պարոյր Սեւակ 32
- Լեզուական-Գործնական Աշխատանք

6. «ԽԵՆԹ»ԻՆ ԵՐԱԶԸ - Ռաֆֆի 37

7. ՄՈԼՈՐԱԿԻՆ ՄԱՀԸ - Իվան Եֆրեմով 44
- Լեզուական-Գործնական Աշխատանք

Բ.- ՄԱՐԴԸ՝ ՁԳՏՈՒՄ ԵՒ ԻՐԱԳՈՐՇՈՒՄ 51

8. ՃԷՅՐԱՆ - Գրիգոր Զօհրապ 52
- Լեզուական-Գործնական Աշխատանք

9. ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ - Ֆրանց Վերֆել 61

10. ԱՐՏԱՒԱԶԴ ԵՐԿՐՈՐԴ - Վահան Թէքէեան 70
- Լեզուական-Գործնական Աշխատանք

11. ՄԱՆՉ ԸԼԼԱՅԻ - Զապէլ Եսայեան 72

12. ԹԱՂՈՒՄ ՔԱՋՈՐԴՈՅՆ - Մկրտիչ Պէշիկթաշլեան 79
- Լեզուական-Գործնական Աշխատանք

13. ՆԱՒԸ ԼԵՐԱՆ ՍՏՈՐՈՏԻՆ - Կոստան Զարեան 83

14. ԱՒԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ - Դերենիկ Դեմիրճեան 88

Գ.- ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԿԵԱՆՔ 93

15. ՆՈՐ ՄԱՆՉՈՒԿԸ - Վահէ Օշական 94

16. ՀԻՆ ԵՂԶԵՐԱՓՈՂԸ - Հենրիկ Էդոյեան 98
- Լեզուական-Գործնական Աշխատանք

17. ԿԵԱՆՔԻ ՊԱՀԸ - Ուիլիամ Սարոյեան 101
- Լեզուական-Գործնական Աշխատանք

18. ՀԱՅՐ, ՕՐՀՆԷ՛ - Դանիէլ Վարուժան 106
- Լեզուական-Գործնական Աշխատանք

19. ԵՍ Ի՞ՆՉ ԸՆԵՄ ՀՈԳԻՈՎ - Արշակ Չոպանեան 110

20. ԿԱՐՕՏ ՁՈՒԱՐԹ ԲԱՆԵՐՈՒ - Վահէ-վահեան 114
- Լեզուական-Գործնական Աշխատանք

21. ՈՐՏԵ՞Ղ ԷԻՐ, ՄԱՐԴ ԱՍՏՈՒԾՈՅ - Ջօրայր Խալափեան 117

Դ. ԿԱՆՉԵՐ 123

22. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ - Գրիգոր Պըլտեան 124

23. ԳԵՂՈՒՀԻՆ - Պետրոս Դուրեան 128
- Լեզուական-Գործնական Աշխատանք

24. ԱՆՈՒՇԻՆ ՆՈՐ ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐԸ - Լուիզա Ասլանեան 132

25. ՀԱՅԿԱՁԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Նիկողոս Սարաֆեան 136
- Լեզուական-Գործնական Աշխատանք

26. ՀԻ՞Ն, ԹԷ՞ ՆՈՐ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ - Լեւոն Շանթ 140

27. ՍԵՒ ՇՈՎԸ - Ինտրա 146

28. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԶԷՆՔԸ - Խաչատուր Աբովեան 151

ՈՒՍՈՒՑԻՉԻՆ ՀԵՏ 157



Հնդկաց ովկիանոսի ափերուն, այս տղուն աշխատանքային երկար օրը կ՚անցնի նաւթամբարներու ներքնամասը մաքրելով...

Առաջին Բնաբան

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱՎԱՅՐ

Մարդը «ընկերային էակ» է: Կը փնտռէ ընկեր, ընկերութիւն. կը կազմէ համայնք: Ան նաեւ՝ իր անհատական թէ հաւաքական գործունէութեամբ՝ կը փոխակերպէ բնութիւնը, անոր կու տայ մարդկային կնիք:

Բայց համայնքը հաւասարութիւն չէ. սկիզբէ՛ն արդէն՝ հոն եղած են տիրապետողներ եւ ենթարկուողներ:

Շատ կանուխէն՝ ընկերութիւնը դարձած է մեքենայ մը,- բարդ՝ ինչպէս մարդու հոգին.

կեանքը պարզացնելու տեղ, կամ չափով մը պարզացնելով հանդերձ՝ անիկա ստեղծած է իր ուրոյն խնդիրները...

«Ձօրեղ» անձեր, ազգեր, դասակարգեր ճնշած եւ անիրաւած են տկարները. հալածած են շարժումները, որոնք կը ձգտէին ընկերութիւնը սրբագրելու, բարեփոխելու...

«Ա՛լ կը բաւէ» գոչած են անիրաւուած-ոտնակոխուածները. դիմած են յեղափոխութեան. տապալած են հինը, փորձած են ստեղծել նորը՝ արդար, իրաւական ընկերութիւն մը:

Բայց... Մարդը, անկատար արարած,

որքա՜ն համեստ պէտք է ըլլայ եւ շրջահայեաց, որպէսզի այդ «նոր» ընկերութիւնը շուտով չդառնայ «հին», անիրաւ ու անարդար՝ իր կարգին...

Ու նաեւ որքա՜ն ուշադիր՝ որպէսզի բնութիւնը փոխակերպող իր գործունէութիւնը չդառնայ բնութեան քանդում, մոլորակի ապականում եւ մարդու անդարձ մեքենայացում...

1 ԳԻՔՈՐ

«Գիքորը» *պատմութիւնն է գիւղացի մանչուկի մը, որ քաղաք կը տարուի իբր ծառայ: Գիւղացի հօր աղքատութիւնն ու տգիտութիւնը, միացած քաղաքացի «վարպետին» անխղճութեան, պատմութիւնը պիտի հասցնեն տխուր վախճանի մը:*

Այս հատուածը կը պատմէ առաջին մասը՝ Գիքորին քաղաք երթալը եւ ծառայութեան մտնելը: Գիւղացի տիպարներու վարմունքին մէջէն՝ կը ներկայացուին գիւղական աշխարհն ու գիւղի մարդոց հոգին. ապա՝ քաղաքացի որոշ դասակարգ մը, որ հարստացած է շահագործելով խեղճ մեծամասնութիւն մը: Վերջապէս, արագ գծանկարով, կը տրուին նաեւ քաղաքի կեանքը, շարժում-խճողումը:

Ընկերային ընդհանուր այս խնդիրին մէկ երեսն ալ՝ գիւղացիութեան գաղթն է դէպի մեծ քաղաքները: Վերը նշուած շահագործումին կողքին, Թումանեան կը ջանայ նաեւ զգացնել, որ գիւղացիութեան այդ արտագաղթը, իր կեանքի աւանդական ձեւէն կտրուիլը, ինքնին աղէտ է - եւ իրեն՝ գիւղացիին համար, եւ մարդկութեան համար առհասարակ:

1. Գիւղացի Համբոյի տունը կռիւ էր ընկել:

Համբօն ուզում էր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք, գործի տայ, որ մարդ դառնայ: Կինը չէր համաձայնում:

- Չեմ ուզում, իմ խեղճ երեխին էն անիրաւ աշխարքը մի գցի[1], չեմ ուզում,- լալիս էր կինը:

2. Բայց Համբօն չլսեց:

Մի խաղաղ առաւօտ էր, մի տխուր առաւօտ: Տնեցիք ու հարեւանները եկան մինչեւ գիւղի ծայրը, Գիքորին պաչեցին ու ճամփայ[2] դրին:

Քոյրը՝ Զանին, լաց էր լինում, իսկ փոքրիկ Գալօն մօր գրկից ձայն էր տալի. *«Գիգո՜ լ, էդ ո՞ւլ ես գնում, հէ՜ Գիքո՜ լ»:*

Գիքորը շուտ-շուտ ետ էր նայում: Տեսնում էր՝ դեռ գիւղի ծայրին կանգնած են նրանք, ու մայրը գոգնոցով սրբում է աչքերը: Կրկին վազում էր հօր կողքով կամ նրա առաջն էր ընկնում: Մին էլ ետ նայեց. գիւղը ծածկուել էր բլուրի ետեւ:

2ա. Գիքորը ճամբու դնողներէն յատկապէս երկուքը բնական եւ յուզիչ կը դարձնեն տեսարանը: Ճշդէ՛...

2բ. Գրագէտը ի՞նչ անուղղակի ձեւերով կը զգացնէ մեզի Գիքորին փափաքը՝ չհեռանալու գիւղէն եւ իրեններէն:

Այնուհետեւ Գիքորը ետ էր ընկնում:
- Արի հա՛, Գիքոր ջան, արի՛, հասանք հա՛,- որդուն կանչելով գնում էր Համբօն, շալակին՝ խուրջին, մէջը հաց, պանիր ու մի քիչ ծխախոտ:

Իրիկնապահին, երբ անցնում էին սարերը, մի անգամ էլ երեւաց գիւղը հեռո՞ւ մշուշում:
- Ա՜յ, ապի, մեր տունն էն ա հա՜,- ցոյց տուաւ Գիքորը՝ մատը մեկնելով դէպի գիւղը, թէեւ տունը չէր էլ երեւում,- ու անցան:

3. Առաջին իրիկունը հիւր ընկան մի գիւղում: Տանտէրը Համբոյի հին ծանօթն էր:
Դեղին սամովարը[3] թշշում էր տախտի ծէրին[4]: Մի ջահէլ աղջիկ բաժակները շրջխկացնելով լուանում էր ու թէյ շինում: Նա մի կարմիր սիրուն շոր[4] ունէր հագին: Գիքորն էնտեղ մտքումը դրեց, որ երբ քաղաքում փող աշխատի, իր քրոջը համար էն տեսակ մի շոր ուղարկի:
Իրիկնահացից յետոյ տանտէրն ու Համբօն չիբուխ քաշելով[5] զրոյց էին անում: Խօսեցին Գիքորի մասին: Տանտէրը գովեց Համբոյին, որ չարչարւում էր՝ որդուն մարդ շինի: Յետոյ խօսեցին ապրուստի թանգութեան[6] վրայ: Բայց Գիքորը շատ էր յոգնած, քունը տարաւ:

4. Միւս օր քաղաքում՝ առաւօտը իջան բազար:
- Է՜յ, էդ երեխին ծառայ ես տալո՞ւ,- խանութի ներսից հարցրեց մի վաճառական:
- Հրամանք ես[7],- ասաւ Համբօն ու Գիքորին էն կողմ հրեց:
- Բե՛ր ինձ տուր, ես կը բռնեմ,- առաջարկեց վաճառականը:
Նրան ասում էին Արտեմ աղա:

5. Ու Համբօն Գիքորին ծառայ տուաւ Արտեմ աղայի տանը: Պայմանն էն էր, որ Գիքորը պէտք է տունը մաքրէր, ամանները լուանար, ոտնամանները սրբէր, խանութը բաժին տանէր[8], ու էս տեսակ մանր ծա-

Ինչո՞ւ նախընտրելի են այս անուղղակի ձեւերը:

3. Գիքորին ո՞ր մտածումը մեզ կը յուզէ հոս: Ինչո՞ւ. իր տարիքին յարմա՞ր մտածում մըն է:

5ա. Հանդիսաւոր պայմանագրութեան պէս գրուած առաջին պարբերութեան մէջ,

ռայութիւններ, մինչեւ մի տարի: Մի տարուց յետոյ, աղան նրան պէտք է[9] տանէր խանութ, շինէր խանութի «աշկերտ», ու էսպէս Գիքորը պէտք էր «բարձրանար»:

- Հինգ տարի փող չեմ տայ,- ասաւ աղան պայմանը կապելիս:- Թէ ճիշտը[2] կ՚ուզես, դեռ դո՛ւ պէտք է տաս, որ քու որդին բան է սովորելու: Ախր բա՛ն չգիտի...
- Որտեղի՞ց գիտենայ, աղա ջան,- պատասխանեց Համբօն,- որ գիտենար՝ էլ ո՞ւր կը բերէի. ես էլ բերել եմ, որ բան սովորի...
- Կը սովորի, ամէն բան կը սովորի: Էնպէս սովորի ո՜ր... Ձեր կողմերից Նիկօն, որ իրեն համար խանութ ունի բաց արած, նա ինձ մօտ է մարդ դառել: Ամա վերջում մի քանի կտոր գդալ[10] գողացաւ...
- Չէ՜, աղա, սա գողանալ չի սովորել: Որ անի, կը գամ կը տանեմ՝ Քուռ գետ կը գցեմ[1]:
- Հա՛, որ ձեռը հալալ է՝ մարդ կը դառնայ:
- Իմ հոգն էլ էն է, աղա, որ մարդ դառնայ, լեզու սովորի, գրիլ-կարդալ սովորի, նստիլ-վերկենալ սովորի, մարդ ճանաչի, որ աշխարքումն ինձ նման խեղճ ու զուրկ չմնայ... Ինքն էլ աչքաբաց երեխայ է, գեղական դպրոցում էլ գրաճանաչ է էլել[11], գրի սեւն ու սպիտակը ջոկում է: Ամա խնդիրքս էն է, որ լաւ մտիկ անէք, ղարիբ[12] երեխայ է...

Աղան Համբոյին հանգստացրեց ու դուրս գնաց՝ բարձր ձայնով հրամայելով. *«Չայ բերէք, հաց բերէք սրանց համար...»*:

6. Հէր ու որդի նստել էին խոհանոցում:
- Դէ, հիմի դու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ տղայ ես դուրս գալի... Հէնց պէտք է անես, որ... ես ի՞նչ գիտեմ... ո՜վ Տէր Աստած...,- մռնչաց Համբօն ու չիբուխը լցրեց:

Այնինչ Գիքորը չորս կողմն էր դիտում:
- Ապի, սրանք բուխարի[13] չունե՞ն:
- Չէ, սրանք վառարան ունեն...
- Կալ էլ չունե՞ն:
- Սրանք գեղացի հօ չեն, որ կալ պահեն...

գրագէտը ի՞նչ ձեւերով կը զգացնէ լեղի հեգնանք մը:

5բ. Ո՞ր մանրամասնութիւններէն կ՚երեւի, որ Համբօն պատրաստ զոհ մըն է, առանց իր իրաւունքներու նուազագոյն գիտակցութեան:

5գ. Գրագէտը ի՞նչ ակնարկութիւն «կը սահեցնէ» Արտեմ աղային՝ անոր ըսել տուած *«[եթէ] ձեռքը հալալ է...»* խօսքին տակ:

6ա. Գրագէտը ինչպէ՞ս կը զգացնէ խեղճ ու տգէտ Համբոյին դժուարութիւնը՝ իր զաւակը խրատելու:

6բ. Աղքատութեան վիճակին, աղքատի բախտի մասին՝ ի՞նչ է Համբոյի խորհուրդը իր զաւակին. ո՞ր

Տեսարան *«Գիքոր»*էն, շարժա-բեմադրիչ Ս. Իսրայէլեան, 1982:

Էջ 8. Ծանուցում-ազդ *«Գիքոր»* շարժանկարի հին բեմադրութեան, Ա. Մարտիրոսեան, 1934:

- Բա ո՞րտեղից են հաց ուտում:

- Փողով առնում են՝ ուտում: Հացն էլ են փողով առնում, եղն էլ, կաթն էլ, փայտն էլ, ջուրն էլ...

- Վա՜...

- Բա՜, սրան Թիֆլիս կ՚ասեն: Դու հլա ղոչաղ[14] կաց, դեռ շատ բան կ՚իմանաս:

- Ապի, սրանք ժամ[15] ունե՞ն...

- Ունե՜ն, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնեայ են: Մտիկ արա հա՜.- Կարելի է քեզ փորձելու համար փող վար գցեն, չմոտենաս: Թէ վերցնես էլ, տար ասա. *«Խանո՛ւմ, էս ի՞նչ փող է, էսրեղ վար ընկած էր. աղա՛, էս բանն էսրեղ գրայ»*, թէ չէ...

- Էստեղ էլ ոստիկան կա՞յ որ...

- Կա՜... Վախտ ու անվախտ դէս-դէն չընկնես[16], ձեռքդ ընկած փողը չփչացնես. հազար ու մի պակասութիւն ունենք: Քեզ էլ լաւ պահի, գիշերները բաց չքնես, չմրսես... Մին-մինը եկողի հետ գիր ուղարկի...,- մերթ-մերթ չիբուխը բերանից հանելով որդուն խրատում էր Համբօն: Այնինչ՝ Գիքորը ննջում էր:

- Հացի փշուր կը տան, կերակուրի մնացորդ կը տան. շատ անգամ՝ իրանք կ՚ուտեն, քեզ չեն տայ. ոչի՛նչ, ծառայի կարգ է... Օր է՝ անց կը կենայ[17]...

7. Շարունակում էր հէրն իր խրատը, բայց Գիքորը՝ թիկնը տուած[18] հօրը՝ քնել էր արդէն:

նախադասութեամբ կ՚արտայայտուի իր «կեանքի փիլիսոփայութիւնը»...

7. Ճշդէ՛ այն աղուոր տեսարանը, որ գրագէտը նկարած է աւարտին (մաս 7ի առաջին եւ վերջին զոյգ տողերը), մէյ մը զայն մաս 6ի մէջ «բռնելէ» ետք...

- Կրնա՞ս անկէ գծանկար մը հանել...

ԲԱՑԱՏՐԵԼԻ ԵՏՔ

1. Հաւաքէ՛ այն մանրամասնութիւնները, որոնցմով Թումանեան կը թելադրէ իր համակրանքը Համբոյին ու Գիքորին հանդէպ, եւ հակակրանքը՝ Արտեմ աղային. զանոնք խմբէ՛ երկու սիւնակի տակ:

Էն երկու օրը նա էնքան բան էր տեսել, էս ու էն կողմը նայել, որ յոգնել էր բոլորովին:

Մրգով լիքը խանութները, դէզով՝ գոյն-գոյն կտորեղէնները, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող երեխաների խմբերը, իրար ետեւից սլացող կառքերը, ուղտերի շարքերը... էս ամէնի գոռոցն ու զնգոցը, աղմուկն ու աղաղակը իրար խառնըւած ղժվժում էր նրա գլխում: Եւ նա յոգնել՝ հօրը թիկնը տուած քնել էր[19]:

2. Գրագէտը այս մանրամասնութիւնները իբր «միջոց» կը գործածէ՝ *անուղղակի արտայայտելու* իր զգացումները...: Բացատրէ՛ ինչո՛ւ այդպէս պէտք է ըլլայ (գրական կտորի մը մէջ):

- Զուտ արեւելահայերէն եւ բարբառային ձեւերը գիրքին մէջ կը նշուին աստղանիշով:

1. **Գցել.*- Նետել: 2.**Ճամ**փ**այ. **ճիշ**ա**պ** - արեւելահայերէնի յատուկ. ուղղագրութեան ձեւեր:
3. *Սամովար՝* թէյ եփելու սարք: 4.**Տախտի ծէրին՝* բազմոցին ծայրը: **Շոր՝* Հագուստ:
5. Ծխամորճ ծխելով: 6. **Թանգութիւն՝* Սղութիւն:
7. *Հրամանք ես՝*«Այո» ըսելու յարգալի ձեւ: 8. *Բաժին տանել.*- Կերակուր տանիլ:
9. *Պէտք է՝* արեւելահայերէն ձեւ *պիտի*-ի համար: 10.**Գդալ՝*Դգալ:
11. Կարդալ-գրել սորված է: 12. Օտարական, տունէն հեռու գտնուող:
13.Պատի մէջ կառուցուած վառարան: 14.**Ղոչաղ՝*Քաջ, ամուր:
15. Եկեղեցի: 16. Անյարմար ժամու՝ հոս-հոն չերթաս:
17. Կ՝անցնի: 18. Կռնակը տուած, կռթնած:
19. Հեղինակին կենսագրութիւնը՝ տե՛ս Գիրք 1:

Լեզուական-Գործնական Աշխատանք

- Արեւելահայերէն եւ բարբառային ձեւեր.-

- էս տեսակ մի շոր .....

- էդ երեխէն .....

- որդու հետ .....

- հօր կողքով .....

- պայմանը կապելիս .....

o Աղջիկը մի կարմիր սիրուն շոր ունէր հագին: -

.....

o Համբօն չարչարւում էր՝ որդուն մարդ շինի: -

.....

o Որ գողանայ, կը գամ կը տանեմ՝ գետը կը գցեմ.-

.....

o Մին-մինը եկողի հետ գիր ուղարկի:-

.....

o Նա յոգնել՝ թիկնը հօրը տուած քնել էր:-

.....

2 ԵՐԳԻԾԱԲԱՆԻՆ[1] ՁԵՌԱՏԵՏՐԸ

Սուր դիտողութիւն, յեղափոխական նկարագիր, երգիծանքի մեծ շնորհք եւ առողջ դատողութիւն - ահա գիծերը, որոնք Յակոբ Պարոնեանը կը դարձնեն հայ գրականութեան անմահ դէմքերէն մէկը:

*Կարդալով **«Ձեռատետր»**ին յառաջաբանը, ապա նաեւ քանի մը հատուած գործէն, արդէն կ՚անդրադառնանք այս բոլորին: Հայ կեանքի այս քաջ Պահակին աչքը հասած է բոլոր անկիւնները ազգային մեր իրականութեան, Պոլիսէն Կովկաս ու աւելի անդին: Բժիշկի անոր նշդրակը բացած է մեր բոլոր ընկերային վէրքերը՝ զանոնք մաքրելու որոշումով:*

Աւելի՛ն. կը տեսնենք Պարոնեանի փայլուն միտքը եւ՝ քաջութիւնը՝ ընդհանուր քաղաքականութեան մէջ: Ու մե՛ծ քաջութիւն պէտք էր՝ Օսմանեան կայսրութեան սրտին վրայ քաղաքական-երգիծական թերթ հրատարակելու համար, տեւաբար ճշմարտութիւններ ըսելու, բողոքելու եւ մտրակելու...:

Պարոնեան ծառայած է այս կոչումին՝ աչքը առած իր «երկար լեզուին» կտրուիլը գրաքննութեան կողմէ, այսինքն թերթերուն փակուիլը. նոյնիսկ ատիկա՝ դարձուցած է ծաղրանկարի եւ բողոքի նիւթ...

«Մոլութիւններու վրայ ծիծաղելով» մարդիկը «առաքինութեան ճամբուն» բերելու Պարոնեանի նպատակը աւելի լաւ չէ վարձատրուած հայութեան մէջ ալ, ուր ան, քիչերու յարգանքի կողքին, «վայելած է» շատերու թշնամութիւնն ու հալածանքը...

1. Պարոննե՛ր, այս վերնագիրը կարդալով չկարծէք, թէ սնանկացած վաճառական մըն եմ եւ կու գամ հաշիւներս հանրութեան ներկայացնելու: Պատիւ ունիմ յայտնելու, որ կեանքիս մէջ վաճառական չեմ եղած եւ ըլլալու փափաք ալ չունիմ:

Սակայն, որոշեցի ձեռատետր մը ունենալ, հոն նըշանակել օրուան դէպքերը եւ երբեմն անոնց առթիւ մահկանացուներու[2] թերութիւններուն վրայ ծիծաղիլ:

Թո՛ղ ազգային բանաստեղծներ Եփրատն ու Տիգրիսը Հայաստանի երկու աչքերը ներկայացնեն եւ

1. Պարոնեան ի՞նչ մեղադրանք ունի շատ

լան, թո՛ղ պարոն Չուխաճեանին[3] ալ եղանակներ յօրինել տան եւ եղանակով լան: Ե՛ս, պարոննե՛ր, կը ծիծաղիմ, եւ ծիծաղելու համար ո՛չ եղանակի կարիք ունիմ, ո՛չ դաշնակի: Թերութիւններու վրայ լալը թերութիւններու մեծագոյնն է, խեղճութեան վրայ արցունք թափելը ցուցնել է, թէ արիւն չունինք թափելու:

գրագէտներու եւ երաժիշտներու հանդէպ: Ո՞ր խօսքը լաւապէս կը խտացնէ իր կեցուածքը լալկանութեան դէմ:

2. Եւ չէք կրնար երեւակայել, թէ որչափ բերկրութիւն[4] պիտի զգամ, եթէ յաջողիմ ձեզմէ ծիծաղներ կթել այն դէպքերուն եւ անձերուն վրայ, որոնց պիտի հանդիպիք ձեռատետրիս մէջ: Մոլութիւններու[5] վրայ ծիծաղիլ առաքինութեան ճամբուն մէջ գտնուիլ է, եւ այս հաշուով որչափ շատ ծիծաղ քաղեմ, այնքան նուազ մոլութիւն պիտի գտնեմ:

2ա. Գրագէտին նպատակը միայն խնդացնե՞լ է. հոս ի՞նչ նոր կարեւոր տարր կը մտնէ երգիծաբանի գործի իր ըմբռնումին մէջ:

Պէտք չէ մոռնալ սակայն այն դասակարգ մը մարդերը, որոնք ուխտ եւ երդում ըրած են բնաւ չխնդալու: Այդպիսիներու հետ գործ չունիմ. ատոնց երեսէն ժպիտ քաղելը աւելի դժուար է քան թուրք կառավարութենէ բարենորոգում յուսալը:

2բ. Չխնդացող մարդերը գրագէտին համար առիթ են նոր հարուած մը տալու: Ո՞վ է թիրախը. հարուածը ինչո՞վ յանդուգն է:

3. Վիճակս զիս հեռու կը պահէ աչառութեան[6] փորձութենէ. փառք նախախնամութեան[7], բարեկամ չունիմ: Բայց, փառք սատանային, թշնամի ալ չունիմ. ուրեմն կիրքով պիտի չխօսիմ, քաւ լիցի[8]...:

Մի՛ զարմանաք, պարոններ: Աշխարհի երեսին այնպէս կ՚ապրիմ, ինչպէս դուք կ՚ապրիք երբեմն թատրոնի մէջ. միայն հանդիսատես կ՚ըլլամ ներկայացման՝ առանց դերասաններու գործին խառնուելու: Ընկերութենէ ընդհանրապէս հեռու կ՚ապրիմ, եւ այս է միակ պատճառ երջանկութեանս:

3. *Հանդիսատես* ըլլալը ո՞ր իմաստով ճիշդ է, ո՞ր իմաստով՝ ոչ: Պարոնեան իրա՞ւ «չի խառնուիր»...

ԷՋԵՐ ՁԵՌԱՏԵՏՐԷՆ

4. Գաւառի սովեալ հայրենակիցներուն համար մեծ վիճակահանութիւն մը պիտի ըլլայ... գալ տարի:

Վիճակահանութեան գործադիր ժողովը շրջաբերական[9] պիտի ղրկէ գաւառները, յորդորելու համար սովեալները, որ համբերեն եւ անօթութենէ չմեռնին, մինչեւ որ իրենց հաց ղրկուի:

4. Հոս բերուած «օրուան դէպքը» ինչո՞վ ծաղրելի է. որո՞նց կ՚ուղղուի երգիծաբանին սլաքը: Ո՞ր բառերը աւելի կը շեշտեն ծաղրը:



Գրաքննութիւնը կը կտրէ
Յ. Պարոնեանի երգիծաթերթին
երկար լեզուն...
Երգիծանկար «Մեղու»ի

Յուսանք, որ մեր հայրենակիցները կը համակերպին այս շրջաբերականին: Գիտեն արդէն անոնք, որ եթէ այս սովը Եւրոպա ըլլար, շատ աւելի զոհ կը խլէր: Փառք տալու ենք, որ թուրք բարեխնամ կառավարութիւնը, սովը շատոնց նախատեսած լինելով, ազդու միջոցներ ձեռք առած էր հաւատարիմ հպատակները անօթութեան վարժեցնելու:

9 յունիս

5. Սովեալներուն օգնելու համար ճամբայ մըն ալ ես ունիմ. սովեալ գաւառներէն հեռացնել այն մարդերը, որոնք շատ կ՚ուտեն:

Հետեւապէս կ՚առաջարկեմ, որ վանահայրերը Պոլիս կանչուին, մանաւանդ Մամբրէ եպիսկոպոսը, որ Մշոյ վանքը ամբողջ կերաւ:

8 յունիս

6. Ըստ ստոյգ վիճակագրութեան[10] մը, Պոլսոյ հայերն այսօր ունին՝ 400 գինետուն, 3 գրավաճառանոց. 1200 պարի դասատու, 5 հայագիտութեան դասատու. 2000 զբօսարան, 3 թանգարան. 4000 ծրար խաղի թուղթ, 5 լրագիր:

Եւ այս վիճակագրութիւնը հերիք է Պոլսոյ հայերու բարոյական վիճակը ցոյց տալու:

16 յուլիս

7. Հայաստանի մէջ հարստահարութիւնները[11] կը շարունակուին: Մեր կառավարութիւնը երեսը հոն դարձնելու ո՛չ ժամանակ ունի, ոչ փափաք:

5. Նոյն նիւթը ի՞նչ քննադատութեան կը ծառայէ հոս. որո՞ւ դէմ...: Ճշդէ՛ «խաղը»՝ ***ուրեմ*** բայի իմաստներուն վրայ

6. Քննադատութիւնը հոս անուղղակի՞ է, թէ՞...: Բացատրէ՛ թիւեր տալէ ետք՝ երգիծաբանին ըրած երկտող մեկնաբանութիւնը:

7. Ճշդէ՛-բացատրէ՛ մասի վերջին երկու տողերուն

Իրաւունք ալ ունի: Այն մարդը, որուն փորը կը ճեղքեն բժիշկները՝ սանտր չ՚ուզեր անշուշտ մօրուքը սանտրելու համար. մօրուքը խառն վիճակի մէջ է եղեր. որո՞ւ հոգ...

Բայց եթէ մօրուքը բռնկի՝ ա՛յն ատեն կարեւորութիւն կը տրուի մօրուքին...

11 սեպտ.

---

1. Կատակ-ծաղրով քննադատող գրագէտ:
2. Մարդ-արարած, հասարակ մարդ:
3. Խօսքը անլուրջ վիպապաշտ բանաստեղծներու մասին է: Տիգրան Չուխաճեան՝ ծանօթ երաժիշտ:
4. Մեծ ուրախութիւն:
5. Վատ սովորութիւն, նկարագիրի գիծ:
6. Կողմնակալութիւն, անարդար նախընտրութիւն:
7. Աշխարհը վարող աստուածային ուժ: 8. Աստուա՛ծ չընէ:
9. Մեծ թիւով անձերու ուղղուած նամակ. յայտարարութիւն:
10. Թիւերով տրուող տեղեկութիւն-գիտութիւն:
11. Հալածանք, անիրաւութիւն:

իմաստը: Ի՞նչ պատգամ կայ անոնց մէջ:

ԲԱՑԱՏՐԵԼԷ ԵՏՔ

1. Ընտրէ՛ եւ արտագրէ՛ այն միտքերը, որոնք կը զգացնեն խոր լրջութիւն: Արտագրածներէդ ընդգծէ՛ անոնք, որոնք զինք կը նմանցնեն «ընկերային վիրաբուժի» Յետոյ՝ անոնք, որոնք իր մէջ կը զգացնեն քաջ յեղափոխական մը:

2. Կը հաւատա՞ս, որ «թշնամի չունեցող» այս մարդը երկար ատեն կրնար մնալ «առանց թշնամիի»: Հիմնաւորէ՛...

Յակոբ Պարոնեան
(1843-1891)

Ծնած է Էտիրնէ քաղաքը, Պոլսոյ մօտ, ուր ստացած է ուսումը. բայց զարգացած է մանաւանդ ինքնաշխատութեամբ:

*1883էն՝ Պոլիս, կը նուիրուի լրագրութեան: Ամբողջ կեանքը, յաջորդաբար, պիտի խմբագրէ ազգային-քաղաքական բովանդակութեամբ երգիծաթերթեր - «**Մեղու**», «**Թատրոն**», «**Խիկար**», որոնք պիտի փակուին թուրք պետութեան հանդէպ խիստ քննադատութիւններու պատճառով: Մէջէմէջ՝ աշխատակցած է նաեւ ուրիշ թերթերու:*

*Այս բոլոր թերթերուն մէջ է, որ Պարոնեան կը հրատարակէ երգիծանքի իր գլուխգործոցները՝ «**Ազգային Ջոջեր**», «**Գուշակութիւնք Խիկարի**», «**Հոսհոսի Ճեռատետրը**»... միւս կողմէ հաշուապահութիւն ընելով՝ մեծ դժուարութեամբ ապրեցնելու համար իր ընտանիքը - եւ թերթերը...:*

3 ԱՐԱԶԸ

Հատուածը, նախ, մեզի կը բերէ պատկեր մը հայ Գիւղէն՝ ինչպէս որ անիկա էր 19րդ դարու վերջերուն, Արարատեան դաշտին մէջ:

Ազգային ճնշումէն գրեթէ ազատած, բայց միշտ աղքատութեան ու տգիտութեան մէջ թաղուած, գիւղացիներու մեծամասնութիւնը հազիւ ապրուստ մը կը հանէ սպառիչ աշխատանքով, բնական աղէտներու վախը սրտին: Յոս, ասոնց կ՚աւելնայ պայքարը բնութեան մէկ այլ ուժին՝ Արաքս գետին դէմ, որուն ջուրը, նախնական թումբերով զսպուած, կը հասնի մինչեւ իրենց մշակութիւնները: Ոռոգող այս գետը իրենց համար բարիք է, բայց եւ վտանգ է. իրենց «տէրն է եւ զուլումը»:

Պատմուածքը նոյն ատեն կը շօշափէ անհատի եւ հաւաքականութեան յարաբերութիւնները: Բնութեան դէմ մղուող պայքարին մէջ՝ Գալօն խեղդամահ կ՚ըլլայ: Ինչպէս իր կինը պիտի բացատրէ պզտիկ Շողիկին՝, զայն «Արազը տարաւ՝ գիւղի՛ համար»... Անհատ եւ համայնք լրացուցիչ են, «մէկը միւսին համար». բայց փոխադարձ այս լրացումը յաճախ նաեւ ի վնաս է անհատին - յատկապէս աւելի խեղճերուն...

1. Գարնան վերջն էր, արիւն-քրտինք թափելու օրեր: Գիւղը տքնում էր[1]. փոքրիկ մանուկներին էլ չէին խնայում:

Դաշտերում, այգիներում, բանջարանոցներում կեանքը եռում էր. ամէն կողմ ծռուած մէջքեր, քրտնաթոր ճակատներ, արեւի առաջ չորացած, տանջուած դէմքեր:

2. Գալօն էլ դադար չունէր: Ընտանիքը մեծ չէր՝ ինքը, կինը, եւ փոքրիկ աղջիկը՝ ինը տարեկան Շողիկը: Էլի[2] երեք բերան էր, պէտք էր կերակրել. իսկ գիւղում ձմեռը կատակ չի անում:

Գալօն ողջ օրը քաղհան է անում[3], կնոջ եւ Շողիկի հետ բամպակի արտն են քաղհանում: Փոքր է արտը, բայց թէ որ ժամանակին քաղհանուի, մանաւանդ ջրից չզրկուի, երկինքն էլ կարկուտ ու հիւանդութիւն չտայ,

2ա. Հեղինակը «գրագէտի՞ լեզու»ով կը պատմէ գիւղացիին հարցերը...:
Տո՛ւր օրինակներ:
Բացատրէ՛ լեզուական «միջոցներու» այս ընտրանքը. գտի՛ր եւ

Գալօն էլի մի տարի գլուխ կը հանի՝ ամօթը երեսին[4], առանց ուրիշի ձեռքին նայելու:

Գալօն գիտի, որ քաղհանը կնոջ գործ է եւ ո՛չ տղամարդի. նա գիտի, որ տղամարդի մէջքը չպէտք է մինչեւ գետին ծռուի, որ նա կնոջ պէս չպէտք է գունդ դառնայ, սողայ՝ այս ու այն վնասակար բոյսը քաղելու համար: Այդ բոլորը նա լաւ գիտի, բայց դէ՛ ինչ արած[5], կարիքը մէջք էլ է ծռում, վիզ էլ, գլուխ էլ[6]:

3. Քաղհանը տղամարդի գործ չէ, բայց հեշտ[7] էլ գործ չէ: Գալօն ամբողջ օրը ցաւով է տեսնում իր Շողիկին, որ կռացած փոքրիկ ուրագի վրայ, գլուխը թաղած խոտերի մէջ, մանր-մանր հարուածներ է տալիս եւ դժուարութեամբ է առաջանում:

Քրտինքը ծորան-ծորան[8] հոսում է փոքրիկ սիրուն այտերի վրայից, փոշին բարձրանում ու ծածկում է նրա մազերն ու երկայն թարթիչները. բայց աղջիկը շարունակում է քաղհանել, որովհետեւ հայրն ասել է՝ Վարդավառին[9] նրա համար վարդագոյն շոր պիտի գնի, խշխշան ու սիրուն: Նա աշխատում է ետ չմնալ ծնողներից, որոնք նրա մանկական փոքրիկ ինքնասիրութիւնը[10] խնայելու համար՝ երկու կողմից օգնում են՝ աննկատելի առաջի խոտերը քաղհանելով:

Արեւը վերից անխնայ թափում է իր կիզիչ ճառագայթները եւ տօթը[11] գնալով աւելի խեղդող է դառնում:

4. Երեկոյեան տուն դառնալիս՝ կինը լուռ քայլում էր Գալոյի մի կողմից, իսկ Շողիկը միւս կողմից՝ բռնած հօր ձեռքը: Փոքրիկը յոգնած էր. ոտները խառնելով՝ հազիւ-հազ հետեւում էր հօրը, բայց էլի անդադար խօսում էր իր վարդագոյն շորի, կանաչ-կարմիր ժապաւէնի եւ կօշիկների մասին:

Գիւղը հեռու չէր. այնտեղից լսւում էր Գզիր[12] Վարդոյի անհանգիստ կանչը, որ վտանգ էր գուժում[13].

- Էգուց տունը մի մարդ[14] Արազը գնայ, թումբերը քանդուել են հա՜ա:

Գալօն կանգ առաւ, բերանաբաց ականջ դրաւ, մի վայրկեան սառած մնաց, ապա՝

- Արա՜զ, տո՛ւնդ քանդուի, Արազ... էլի՞[2]...

- Հայրի՛կ, Արազն ի՞նչ է արել:

Հայրը պատասխան չտուեց. կոտրուած ձայնով դարձաւ կնոջը.

հիմնաւորէ՛ անոնց առաւելութիւնները:

2բ. *«Քաղհանը կնոջ... չպէտք է գունդ դառնայ...»*. ի՞նչ մտայնութենէ կը բխի այս «սկզբունքը»: Իսկ Գալօն ինչո՞ւ կ՚անտեսէ զայն: Բացատրէ՛ *«Կարիքը մէջք էլ...»* միտքը

3ա. Այս մասի գլխաւոր հերոսը ո՞վ է: Գրագէտը ի՞նչ մանրամասնութիւններ «բռնած է», նկարագիրի եւ վարմունքի կապուած, որոնք համակրանք եւ գութ կ՚արթնցնեն մեր մէջ:

3բ. Ծնողներու վերաբերումէն ինչպէ՞ս կ՚երեւի, որ անոնք կը գուրգուրան Շողիկին վրայ:

4ա. Ինչպէ՞ս կը խանգարուի ընտանեկան հանդարտ պահը: Ո՞ր բառերը կ՚արտայայտեն մարդոց բացատրելի մտահոգութիւնը:

- Կնի՛կ, էգուց Շողիկի հետ կ՚երթաս քաղհանի, ճար չկայ[15]: Ժամանակ է գտել թումբերը քանդելու[16]:

Գիւղը աղմկուած էր. հրապարակում կանչ, հայհոյանք, անէծք, սպառնալիք իրար էին խառնուել. մարդիկ իրար չէին հասկանում, բոլորի ձայները միասին կազմում էին մի անհասկանալի ժխոր: Գիւղը պատրաստւում էր դիմադրել մի անակնկալ յարձակման: Անողորմ[17] կռիւ էր Արազի դէմ. թշնամին շատ էր հզօր, եւ մարդիկ շատ էին խեղճ իրենց դիմադրութեան նախնական միջոցներով:

Կէս գիշերին պէտք էր ճանապարհ ընկնել՝ վաղ առաւօտ ափին գտնուելու համար. բայց դեռ՝ անհրաժեշտ էր պատրաստութիւն, բահեր, կացիններ, ուրագներ, հաստ պարաններ եւ ամենից աւելի՝ ծառերի մեծ-մեծ ճիւղեր, որոնք պիտի կապուէին եւ գետի առաջ ձգուէին՝ ջրի ընթացքը փոխելու համար:

4բ. Ժամանակի պայմաններում եւ մարդոց վիճակին վերաբերող ո՞ր արտայայտութեամբ գրագէտը խիտ բացատրութիւն մը կու տայ ստեղծուած իրարանցումին:

5. Արեւելքը դեռ չէր տժգունել:

Մարդիկ քնաթաթախ ու յօրանջելով դուրս էին սողում այս ու այն պատի ետեւից, այս ու այն անկիւնից եւ մոլար[18] քայլերով դիմում էին հրապարակը: Լսւում էին եզների բառաչ, բահերի զնգոց, կիսաքուն մարդկանց կցկտուր[19] խօսակցութիւն...

Գալօն էլ փողոցում էր:

Գիւղը շարժուեց՝ գնաց դէպի Արազը: Սայլերը ճռռընչում էին ճիւղերի ծանրութիւնից, իսկ գիւղացիները, մեծ ու փոքր խմբեր կազմած, հետեւում էին դանդաղ ընթացքով: Մի ամբողջ կարաւան էր:

5ա. Արազը ի՞նչ երեւոյթով կը ներկայանայ. Գրագէտին նկարագրական ձեւերով՝ ինչի՞ «կը վերածեն» զայն:

Արեւը ծագել էր արդէն, երբ այդ կարաւանը գետի ափը հասաւ: Արազը ծոյլ-ծոյլ արեւկող արած[20], քնից նոր արթնացածի պէս ձգձգւում էր[21] եւ մեղմով ետ էր գցում իր վրայից կաթնագոյն մշուշը:

Գալօն կանգնած նայում էր՝ մտքերի մէջ ընկղմած:

- Գալօ՛, Գալօ՛, գործի կաց[22]:

Վարդօն էր, գզիր Վարդօն:

- Հա՛, գործի կենամ, Վարդօ՛, լաւ ես ասում. մեր ցաւն է, հոգա՛նք:

- Հապա մեր ցաւն է, Գալօ ախպէր,- վրայ բերեց Վարդօն.- Արազը որ կայ՝ մեր տէրն է, մեր էլ զուլումն է[23]. ի՞նչ անենք, ախպէր:

5բ. Երկու գիւղացիներու կարճ խօսակցութիւնը ինչպէ՞ս կը հաստատէ վերի այդ երեւոյթը...

«Բամպակահաւաք Արարատեան դաշտին մէջ»
Մարտ. Սարեան, 1949:

6. Գործը եռում էր. գիւղապետը որոտում, անիծում, հայհոյում էր. երբեմն լսում էր մտրակի շրխկոց:

Ոստերից պարաններով մեծամեծ կապոցներ շինեցին, ծալքերում քար ու հող ածելով[24], որ ծանր լինի, ջրին դիմանայ: Եւ մի քանի տասնեակ ձեռքեր միանգամից կպան կոյտերին ու բոլոր ուժով, հարայ-հրոցով դէպի գետ գլորեցին:

Բլրաձեւ կոյտը ահագին շառաչով ջուրն ընկաւ. ալիքները փրփրալով փախան այս ու այն կողմ, ապա ամբողջ ուժով զարկուեցին այդ նոր արգելքին: Թումբը դողաց. բայց նրա վրայ թռան մի խումբ մարդիկ, պարաններից ու ճիւղերից կախուեցին, մինչ ափի բազմութիւնը շտապ քար ու ցեխ էր գցում վրան, որ ծանրանայ: Գիւղապետը ափից էր հրամաններ արձակում. գզիրը թմբի վրայ էր:

Այստեղ էր եւ Գալօն:

- Հարեւաննե՛ր, հող ու քա՛ր ածեցէք[24],- քրտինքի մէջ կորած ճչում էր նա. կարծես վիշապի դէմ պայքար էր մտել եւ ոգեւորութեան մէջ ամէն ինչ մոռացել:

Ամբոխը գործում էր անընդհատ: Լա՜ւ էր. Գալօն հրճւում էր՝ «Քար ու ցեխ»: Ուռած ալիքները սպառնալի էին, բայց թումբը հաստատուն էր. կարծես է՛լ վտանգ չկար. նոյնիսկ ջուրը շարժուեց դէպի առուները. էլի՛ մի փոքր ճիգ, եւ՝ վերջացած է:

6. Խօսքի մասերէն (գոյական, բայ, ածական...) ո՞ր մէկը առատօրէն գործածուած է հոս. ինչո՞ւ. ի՞նչ է նկարագրուած-պատմուածը:

7. Բայց յանկարծ թումբը երերալ սկսեց, դողաց ինչ-պէս երկրաշարժի ցնցումից. ապա ալիքների թափի առաջ հազիւ հաստատուած թումբը տեղահան եղաւ, սկսեց ցրիւ գալ[25]:

- Պարանը կտրուեց, ա՛փը թռէք,- ճչացին:

Բազմութիւնը շտապ ետ փախաւ՝ ջուրը չթափուելու համար:

- Թռի՞ր, Գալօ, տնաքա՞նդ[26],- ճչաց ամբոխը:

Գալօն սարսափած նայեց իր ոտների տակ քանդուող թումբին եւ ուզեց թռչի դէպի ափը, բայց շրրմբոցով ընկաւ ջուրը:

Այս բոլորը կատարուեց մի ակնթարթում: Բազմութիւնը քար կտրեց, իսկ գիւղապետը գունատուած՝ պոռում էր.

- Պարա՞ն, պարան ձգեցէք, խեղդուեց, շո՛ւտ:

Յանկարծ ճիւղերի կոյտը գլորուեց, թաւալ-թաւալ հասաւ խեղդուողին եւ մի անգամից իր տակը թաղեց...: Վերջացա՞ւ:

8. - Մայրի՛կ, ի՞նչ եղաւ իմ հայրիկը:

- Արազը տարաւ, Շողի՛կ ջան, Արազը տարաւ:

- Ախր ինչո՞ւ տարաւ:

- Գիւղի համար, մատա՛ղ[27], գիւղի համար տարաւ[28]:

---

1. Չարաչար աշխատիլ, ճիգ ընել: 2. *Դարձեալ, կրկին:
3. Հոս՝ վնասակար բոյսերը քաղել:
4. Առանց ամչնալու, «պատիւը պահելով»:
5. *Մարդ ի՞նչ կրնայ ընել...:
6. Պէտքը կը հարկադրէ մարդս՝ չուզածը ընելու:
7. *Դիւրին: 8. Թեթեւ հոսելով:
9. Հայկական աւանդական ծանօթ տօնը:
10. *Արժանապատուութիւն: 11. Ճնշող տաք:
12. Գիւղապետին օգնականը: 13. Գուժել՝ Գէշ լուր տալ:
14. Վաղը ամէն մէկ տունէ՝ մէկ մարդ... 15. Ուրիշ ելք չկայ:
16. Ամենէն անյարմար ժամանակին: 17. Անգութ, անխնայ:
18. *Մոլորած, շփոթ: 19. Կտոր-կտոր, անկապ:
20. *Արեւոտ տեղ նստած-երկնցած:
21. *Ձգձգուել՝ պրկուիլ, քաշքշուիլ՝ քունէն նոր արթնցածի պէս:
22. *Գործի՛ ելիր, աշխատէ՛:
23. Մեր փորձանքը, մեր ցաւը: 24. *Թափել, լեցնել:
25. *Ցրուիլ, քանդուիլ:
26. Գիւղական ձեւ՝ մէկը կանչելու (ժխտական պարագայի մը):
27. Սիրելիս, հոգիս: 28. Հեղինակի կենսագրութիւն > Գիրք 1:

7. Ո՞ր բայերը, սկիզբը, թումբին քանդուիլը կը պատմեն: Տեսարանը կարճ է. ի՞նչ տպաւորութիւն թելադրելու համար:

8. Գիւղացի կնոջ վերջին խօսքը կը խտացնէ խեղճ ու խոնարհ մարդոց ողբերգութեան իմաստը. բացատրէ՛:

ԲԱՑԱՏՐԵԼԻ ԵՏՔ

1. Գտի՛ր տուեալները, որոնք Գալօն կը պատկերացնեն խեղճ, համեստ մարդ, նաեւ՝ անճարակ, կորսուած...: Այս բոլորը ինչպէ՞ս կը մասնակցին դրուագի ընթացքին եւ յանգումին:

2. Ութ մասերէն ամէն մէկը ո՞ր «խօսքի ձեւին» կը պատկանի - նկարագրակա՞ն, պատմողակա՞ ն, խօսակցակա՞ն (կամ ասոնցմէ ոմանց խառնո՞ւրդը...):

- Վերջին կարճ Մաս 8ին մէջ՝ արժեւորէ՛ միայն «խօսակցական» ձեւի գործածումը: Գտի՛ր՝ ինչո՞ւ աւելի յարմար է ու յաջող այս ձեւը՝ հոս:

Լեզուական-Գործնական Աշխատանք

1. Նոյնարմատ բառեր. գործածէ՛ նախադասութիւններուն մէջ,
օ ողջ օ առողջ օ վարառողջ օ ողջմիտ օ առողջական օ առողջապահական

- ..... վիճակս բարելաւուած է. շնորհակալ եմ ուշադրութեանդ համար:
- ..... ըլլալու համար՝ յարգէ՛ ..... կանոնները:
- ..... որակականը կը նշանակէ *ապրող*, բայց նաեւ *ամբողջ*:
- Ատենին, քաղաքին հարաւը միայն ..... կլիմայով ճահիճներ կային:
- Միշտ ալ կրնաս վստահիլ ..... մարդոց դատումին:

2. Հինգ ասոյթներ. մէկ-մէկ բացատրէ՛ եւ գործածէ՞ նախադասութեան մը մէջ.-

- Գլուխ հանել (գործ մը).- .....
.....
- Գլուխը արդուկել (մէկուն).- .....
.....
- Գլուխ ծռել.- .....
.....
- Գլուխը բարձր.- .....
.....
- Գլուխը ծանր.- .....
.....

3. Նոյն վարժութիւնը՝ բերանացի՝ հետեւեալ ասոյթներով.-
օ արիւն թափել օ լեզու թափել օ քրտինք թափել օ եփել-թափել օ կաթը թափել

4. Ճշդէ՛ իմաստի աստիճանաւորումը՝ ամէն մէկ շարքի մէջ.-
- Կարիքը մէջք ալ կը ծռէ, վիզ ալ, գլուխ ալ...
- Փողոցը՝ կանչ, հայհոյանք, անէծք, սպառնալիք իրարու էին խառնուած:

- Կազմէ՛ աճող աստիճանաւորում.-

ա. Բայեր. Ընկերս համոզելու համար՝ իրեն կը խօսիմ, կը ....., ապա կը .....:

բ. Գոյականներ. Ջուրը հասաւ ծունկերուս. մտահոգութիւնս դարձաւ .....,
....., ապա ....., եւ ի վերջոյ .....:

5. Ծանօթանանք արեւելահայերէնին - Վերածէ՛ արեւմտահայերէնի.-

- Գիւղում ձմեռը կատակ չի անում: .....

- Գալօն ցաւով է տեսնում իր Շողիկին: .....

- Փոքրիկը էլի խօսում էր իր վարդագոյն շորի մասին: .....

.....

- Բազմութիւնը շտապ քար ու ցեխ էր գցում թմբի վրայ: .....

.....

6. Պարբերութիւն

- Ուշադիր կարդա՛ մաս 3ը: Նոյն պատմողական ներկայ ժամանակով, գրէ՛ հատուած մը՝ շուրջ տասը տող, ներկայացնելով շինարար բանուորի մը դժուարին աշխատանքը, կառուցուող տան մը տանիքին, տաք արեւի կամ կաթկթող անձրեւի տակ:

7. Շարադրական Աշխատանք

- Պարբերութիւնդ վերածէ՛ շարադրութեան, ներկայացնելով ամբողջ օրը տաժանելի աշխատանքով ապրուստը հանող անձ մը: Ըսէ՛ նաեւ, ի՛նչ կը զգաս, ի՛նչ կը մտածես նման պարագայի մը առջեւ:



4 ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ

*Արփիար Արփիարեան այս պատմուածքով կը դնէ նոյն հարցերը, ինչ որ Թումանեան՝ «**Գիքոր**»ով: 19րդ դարու վերջը, Թիֆլիսէն Պոլիս՝ ընկերային-տնտեսական պայմանները կը հետեւին համաշխարհային հոլովոյթին եւ նման են իրարու:*

Ուրեմն, պիտի չզարմանանք, որ արեւմտեան Հայաստանի Թորոսները երեւին իբր հարազատ եղբայրները արեւելեան Հայաստանի Համբօներուն: Եւ եղբայր՝ ո՛չ միայն իբր հայեր: Հոս նոյնիսկ չեն քննուիր ազգութիւն ու ազգային ճակատագիր. պանդուխտ Թորոսը եւ գիւղացի Համբօն կ՚եղբայրանան իբր շահագործուած աղքատներ: Ու երբ Ա. Արփիարեան անգամի մը համար կը մոռնայ օտար կեղեքիչը եւ կը ներկայացնէ հայազգի՛ կեղեքիչը,- իր շեշտը նոյնքա՛ն զայրացած է, նոյնքա՛ն դառն...

Պատմուածքին սկիզբը, ան պատմած է, թէ ինչպէ՛ս գործատէրը իր ծառաները կանչած եւ սանդուխներէն վար հրել-նետել տուած է ծեր բանուորը...

1. Բանուորը ինքզինք սանդուխին տակը գտաւ, առանց հասկնալու պատահածը: Ֆէսը դեռ ձեռքն էր, մուճակին մէկը՝ հոս, միւսը՝ հոն. գաւազանն ալ վարը՝ գետինը:

Քեռորդին[1] շէնքին մուտքին՝ աթոռակի մը վրայ նստած էր եւ դռնապան Սիմոնին հետ կը խօսէր: Աղմուկը լսելով՝ երկուքը միասին ներս վազեցին, ծերուկին վիճակը տեսան. հասկցան, որ վերը ծանր բաներ պատահած ըլլալու էին: Ցուպը, մուճակները վերցուցին. դռնապանը խեղճը առաւ հետը տարաւ, խահուէի օճախին առջեւ նստեցուց, քեռորդին ալ՝

1ա. Գրագէտը այս զրկեալ մարդոց միջեւ ի՞նչ փոխադարձ վերաբերում կը տեսնէ, կը շեշտէ եւ կը ջանայ քաջալերել:

քովը: Մէյմէկ սուրճ եփեց ու տաքուկ հրամցուց. Թորոսին սիկարէթ մըն ալ տուաւ:

Մարդը եղածը պատմեց երկու բառով, հեծկլտալով: Դռնապանը ակռաները կը կրճտէր[2] Գասպար աղային դէմ. զայն լա՛ւ կը ճանչնար:

Թորոս աղբարը հազիւ կէս ժամէն գտաւ ինքզինք: Մեկնած ատեն սուրճին դրամը ուզեց վճարել, բայց դռնապանը չառաւ. ինք ալ օրհնէնք մը տուաւ ու քեռորդիին հետ ճամբայ ինկաւ դէպի պանդուխտներու կացարանը:

- Վահշինե՛ր[3],- կը մռլտար Սիմոնը.- ասոնք քիւրտե՛րն ալ, տաճիկնե՛րն ալ փնտռել կու տան:

1բ. Դռնապանը՝ մասի վերջաւորութեան՝ ի՞նչ ցնցող բաղդատութեամբ կ՚արտայայտէ իր բարկութիւնը: Գրագէտը ատով ի՞նչ կ՚ուզէ փոխանցել ընթերցողին:

2. Պոլսոյ մէջ Գասպար Ճամառեան էֆէնտին, աղքատութենէ սկսած, արագօրէն հարստացած էր շինարարական գործով:

Բայց այդքան մեծ հարստութիւն՝ ան կը պարտէր մասնաւոր հնարքի մը. շարունակաբար հինգ-վեց հարիւր հայ գործաւոր կը բանեցնէր, ու տարիներէ իվեր՝ ասոնց շահուն մէկ մասը վար դրած էր՝ ամէն մէկուն հետ երեսունէն մինչեւ յիսուն ոսկի «առկախ հաշիւ» մը թողելով: Այսպէս բացէն՝ տարեկան կ՚ապահովէր 2000 ոսկի յաւելեալ եկամուտ, որ կը նկատէր իր «արդար վաստակը»:

«Աղայական պարտքի» այս տոմարին մէջ, Թորոսը եւս քառասուն ոսկի առնելիք ունէր: Հիմա՝ ա՛լ հիւանդ, տագնապի մէջ, ան յիշած էր այդ առնելիքը՝ *«ծովը ինկողը օձին կը փաթթուի»* մտածելով: Խեղճ հայաստանցին միտքէն չէր անցուցած, թէ Գասպար աղային քով նոյնիսկ օձին չափ գութ պէտք չէր փնտռել...

2. Ճամառեան էֆէնտիին մասին խօսած ատեն, գրագէտը ի՞նչ շեշտով կը գործածէ *առկախ հաշիւ* եւ *աղայական պարտք* արտայայտութիւնները: Անոնցմով ի՞նչ զգացում կ՚արտայայտէ:

3. Վերադարձին, Թորոս աղբարը ոտքի վրայ կենալու կարողութիւն չունէր: Տաքուկ բան մը խմելով՝ անկողին մտաւ: Յաջորդ առտու չկրցաւ տեղէն ելլել: Երկրացիները[4] գացին՝ դարմանատունէն տոքթոր Գարեգինը բերին:

Բժիշկը յանձնարարեց հիւանդը անմիջապէս փոխադրել ազգային հիւանդանոցը՝ «Սուրբ Փրկիչ»:

Ծերը, հազիւ «Փրկիչ» անունը լսած՝ աղաղակեց.

3ա. Հոս ի՞նչ քննադատութիւն կ՚ըլլայ ազգային հիւանդանոցի հասցէին:

3բ. Իսկ երիտասարդ

- Աղէկ եմ, աղէկ, բանի՞կ մը չունիմ:
- Աղէկ ես, աղէկ, բան մը չունիս, ե՛ս ալ կը տեսնեմ,- մեղմ պատասխանեց բժիշկը,- բայց քանի մը օր Հիւանդանոց մնալու ես, որ շուտով ոտքի ելլես:
- Ա՜խ, Էֆէնտի,- ըսաւ հիւանդը հեծկլտալով,- Հիւանդանոց գացող դարիպը հոնկէ ոտքովը դուրս չ՚ելլար. դագա՛ղը կը հանեն:

Երիտասարդ բժիշկը, ձեռքը մօրուքին՝ մտմտալ սկսաւ: Պոլսոյ բժշկական վարժարանէն այդ տարին շրջանաւարտ, երկրորդ անգամն էր՝ «Փրկիչ» փոխադրում կը պատուիրէր պանդուխտներու: Ու երկու անգամին ալ անոնք դող ելած էին լսելով պանդուխտներու համար հիմնուած ազգային հիւանդանոցին անունը...

Բայց այդ անկիւնը հիւանդ չէր կրնար մնալ: Գետնին վրայ նեղկուկ սենեակ մը, երկու յարկի բաժնուած. մէկը՝ վերեւ, միւսը ստորեւ: Իւրաքանչիւր յարկի վրայ վեց անկողին, քով քովի: Հայ բժիշկը դժուարութեամբ շունչ կ՚առնէր: Քիչ մը անդին, օճախի մը վրայ, լուբիան եփելու դրուած էր. գործաւոր մը նստեր՝ սոխ կը ջարդէր. ածուխին հոտը դեռ ծանր էր. ու խեղճ պանդուխտներու արտաշնչումը[5]՝ այդ բոլոր հոտերը միացընելով՝ կը ստեղծէր ապականած[6] մթնոլորտ մը, որ լեզուին մէջ անուն չունի...

.....

4. ... Հօրը մահուան լուրը առածին պէս, մայրն ու պառաւ մամը իրենց սուգին հետ մինակ ձգելով, Մելքոնը ելաւ՝ Պոլիս եկաւ: Հայ գեղացին պարապ ատեն չունի, որ նստի իր մեռելը լայ: Սուգը ունեւորին կը վայլէ, պերճանք է:

Իրենց պապենական վաշխառուն երեք ոսկի եւս տուաւ, ճամբու ծախքի համար. *«Հօրդ քովէն շա՛տ փարա ելեր է,*- ըսաւ,- *պարտքերնիդ ա՛լ տալու էք»:* Արտը պիտի գրաւէր՝ եթէ պարտքի ուշացած մասնավճարը ամիսէ մը չտային...

5. Պոլիս հասնելուն, երկրացիները գացին զինք շոգենաւէն առին՝ իրենց տեղը տարին: Հօրը անկողինը դեռ անանկ կը մնար, իրեն տուին:

բժիշկը... Ի՞նչ լոյսի տակ կը ներկայացուի ան. ի՞նչ է գրագէտին վերաբերումը անոր հանդէպ:

3գ. Խանի աղտոտ սենեակին նկարագրութիւնը ինչո՞վ գութ արթնցնող է. ինչպէ՞ս սակայն կը մնայ զուսպ եւ փափկանկատ:

4. Գրագէտը ի՞նչ կարճ, սուր եւ կծու խօսքերով կը գծէ գիւղացիին վիճակը: Իսկ *պապենական* ածականը ինչպէ՞ս գործածուած է. ի՞նչ շեշտով...

Երբ սուգի լացը լմնցաւ, անցած դարձածները իրեն պատմեցին. Գասպար աղային անօրէնութիւնները[7], հօրը հիւանդութիւնը, Փրկիչ փոխադրուիլը: Փրկիչ տարուելէն քանի մը օր ետք՝ գացեր հիւանդը փնտռեր, տեսնել ուզեր էին. երկրորդ օրը արդէն՝ մեռեր է եղեր: Վրան տասը ոսկի գտնուիլը գիտէին, ուզեր էին, բայց մերժուեր: Հիւանդանոցը ձրիաբար դարմանուող դարիպներուն վրայէն ելածը հիւանդանոցին կը մնայ եղեր...

Ատ իրիկուն Մելքոնը բերանը բան չդրաւ: Երկրացիներուն քով, աթոռակի մը վրայ նստած, կը մտմտար: Գնա՜ց, ա՛ռտը գնա՜ց: Հիմակ անդին Երկիրը *զավալը*[8] մարն ու մամը ո՞րը պիտի լային. մեռելնի՞ն, դարիպնի՞ն, չէ՞ նէ արտերնին... Եւ ի՜նչ պիտի ուտէին, ինչպէ՜ս ապրէին...

- Ա՜խ, Աստուած, ա՜խ,- կ՚աղաղակէին պանդուխտները, երկինք՝պսպղուն աստղերուն նայելով,- աս մինչեւ ե՜րբ պիտի քաշենք: Երկիրը մեր ազգէն Հայ քրիստոնեան է որ օձի պէս վզերնիս կը փաթթուի, հողերնիս, տուներնիս, ունեցածնիս-չունեցածնիս ձեռքերնուս կ՚առնէ: Հո՛ս Ստամպոլ՝ մեր ազգէն Հայ քրիստոնեան է որ *հախ*երնիս[9] կ՚ուտէ, մեր *փարայ*ով մարդ կ՚ըլլայ, ու մեզի դարիպութեան մէջ հիւանդանոցները կը մեռցնէ: Ախ, աս մինչեւ ե՜րբ...

6. Երկու բանուորները, որոնք Թորոսը հիւանդանոց փոխադրած էին, առտու մը նոր լաթերով[10]՝ Մելքոնը առին տարին Ղալաթիա, ճարտարապետին:

Գասպար Աղան ներսն էր, մինակը: Մելքոնը դուրսը կայնեցուցին, իրենք մտան:

Աղան այցելուները լաւ ընդունեց. ասոնք առաջնակարգ գործաւորներէն էին, *խաթիր* ունէին[11]: «Ընտո՞ր էք»[12] մըն ալ հարցուց:

Երբ Թորոսին անունը լսեց ու տղուն գալը իմացաւ, ճարտարապետը ջղայնացաւ, քիթ-բերան ծռմռեց: Առաջարկը լսելով՝ դժկամութիւնը[13] քիչ մը նուազեցաւ, ու վերջապէս զիջում ըրաւ՝ «*խաթեր*նուն համար»: Նուազ տարիքոտ վարպետը ուրախութեամբ ելաւ՝ դուռը բացաւ, Մելքոնը ներս մտցուց:

5ա. Ի՞նչ առաջին մեղադրանք եղած էր արդէն ազգային հիւանդանոցի հասցէին. իսկ հոս ի՞նչ երկրորդ մեղադրանք կ՚ըլլայ: Բացատրէ՛ մէկուն եւ միւսին ծանրութիւնը:

5բ. Պանդուխտները իրենց ո՞ր խօսքերով կ՚ամբաստանեն հայ վաշխառուն եւ հայ դրամատէրը. անոնց ո՞ր արարքներուն համար:

6. Հոս գրագէտին բարկութիւնը ինչպէ՞ս ստեղծած է շատ ուժեղ տեսարան մը: Ընդգծէ՛ այդ ուժգնութիւնը՝ քննելով Գասպար աղային եւ բանուորներուն փոխադարձ կեցուածքը եւ խօսքերը:

ԲԱՑԱՏՐԵԼԻ ԵՏՔ

1. Ամփոփ՝ նշէ՛ ընկերային

Տեսարան
Գ. Սունդուկեանի
«*Պեպո*»էն,
շարժանկար Համօ
Բեկնազարեանի,
1935:

- Հայտէ՛, աղային փէշը պա՛գ[14] տէ՝ աղօ՛թք ըրէ. քեզի գործ պիտի տայ, հինգ ղուրուշ օրականով:
- Շա՞տ է, շա՞տ,- գոչեց աղան:
- Ամա՛ն աղա՛,- պաղատեցան,- անդին պիտի ղրկէ, ասդին պիտի ուտէ, պարտք պիտի տայ... սեպէ *քի* նուէր կու տաս կոր:
- Էյ *քէ՛ք* աղէկ,- ըսաւ աղան վեհանձն շեշտով:

Մելքոնը բարձր հասակը խոնարհեցուց, նորէն շիտակ կանգնեցաւ եւ բարեւ բռնած՝ կեցաւ աղային առջեւ:

- Ամա, հօրդ պէս ապերախտ պիտի չըլլաս,- մռմռաց աղան.- մեռե՞ր է, հա՞:
- Հրամմեր ես, աղա՛,- պատասխանեց տղան:
- Էյ հայտէ՛, վարպետներուն *խաթրին* համար՝ կը ներեմ...

անարդարութեան պարագաները՝ - Մաս 1ի մէջ (աւելի առաջ պատահած).
- Մաս 2ի մէջ.
- Մաս 3ի վերջը.
- Մաս 4ի մէջ.
- Մաս 5ի մէջ.
- Մաս 6ի մէջ:

2. ***Մինչեւ Ե՞րբ*** եւ ***Պանդուխտի Տունդարձը*** (Մելքոն Կիւրճեան-Հրանտ - Գիրք 1): Ի՞նչ են տարբերութիւնները - նիւթի ընտրութիւն, պատգամի ուժգնութիւն...

---

1. Քրոջը որդին:
2. Մեծ բարկութիւն զգալ (ակռաները սեղմել):
3. Գազաններ:
4. Հայրենակից:
5. Ներշնչելէ ետք՝ թոքերէն հանած օդը:
6. Անմաքուր:
7. Չարագործութիւնները:
8. Խեղճ, անօգնական (բարբառային):
9. Իրաւունք (բարբառային):
10. Հագուստ:
11. Մէկուն մօտ արժէք, համարում ունենալ:
12. Ինչպէ՞ս էք:
13. Դժգոհութիւն, մերժելու տրամադրութիւն:
14. Համբուրէ՛:

ԼՍԱ-ՏԵՍՈՂԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

- Դիտէ՛ էջ 6ի «Քարիւղի Տղան», ապա՝ «Գիքոր»ը պատկերազարդող նկարները - ֆիլմի լուսանկար, թէ գեղանկար: Դուն ինքդ հաւաքէ՛ նկարներ, որոնք կը փոխանցեն նոյն պատգամը.- Աշխատանքը յաճախ, դադրելով ըլլալէ բարիք, մարդոց իսկ ձեռքով վերածուած է իրար դժբախտացնելու, տառապեցնելու ձեւի:
- Այդ լուսանկար-գեղանկարներով՝ պատկերազարդէ՛ էջ 23ի շարադրութիւնդ:

Արփիար Արփիարեան
(1852-1908)

Ծնած է Սեւ Ծովուն վրայ, նաւու մը մէջ, որմով ծնողները Ակնէն Պոլիս կ՚երթային: Ուսումը ստացած է Վենետիկ, Մխիթարեան վանքին մէջ:

*1884էն, Պոլիս, վարած է «**Արեւելք**» եւ «**Հայրենիք**» թերթերը, որոնք կարեւոր դեր պիտի խաղային արեւմտահայ լեզուի եւ գրականութեան զարգացման մէջ: Խմբագրած է այլ թերթեր ալ, ու աշխատակցած՝ շատ ուրիշներու - նախ՝ Պոլիս, եւ 1896էն ետք՝ արտասահման, յատկապէս՝ Եգիպտոս եւ Անգլիա:*

Եղած է քաղաքական գործիչ: Ատեն մը՝ գործած է իբր ազգային երեսփոխան. մասնակցած է նաեւ յեղափոխական գործի, Պոլիս թէ արտասահման, իբր Հնչակեան ղեկավար:

*Գրած է պատմուածքներ եւ վիպակներ, որոնցմէ ամենէն ծանօթն է «**Կարմիր ժամուց**»ը:*

Լեզուական-Գործնական Աշխատանք

1. Ճշդէ՛ ազգականական կապ նշող հետեւեալ բառերուն իմաստը.

օ քեռայր օ քեռորդի օ հօրեղբօրորդի օ զարմիկ օ զարմուհի օ քեռկին օ ներ օ տալ օ տագր օ զոքանչ օ աներ օ կեսուր օ կեսրայր օ հարս օ փեսայ

2. Երեք շարք բառերէն հանէ՛ արմատը, որ նոյնն է. գրէ՛ անոր երեք տարբեր իմաստները.-

օ բանուոր - բանիլ

- Առաջին իմաստ.- .....

օ պարբերաբար - բանբեր

- Երկրորդ իմաստ.- .....

օ դրամաբանութիւն - բանիմաց

- Երրորդ իմաստ.- .....

3. Վարի նոյնարմատ բառերը տեղաւորէ՛ հետեւող նախադասութիւններուն մէջ.-
օ բանական օ բանաւոր օ բանագողութիւն օ բանագնաց օ բանակցութիւն օ պարճառաբանութիւն

- Եթէ ..... պատճառ ունէիր հրաժարելու, ըսէիր. որեւէ .....
մարդ պիտի հասկնար եւ ընդունէր բացատրութիւնդ:

- Իր մերժումը արդարացնել փորձեց անորոշ .....ներով:

- Դուն պիտի ըլլաս մեր ..... . եւ վստահ ենք, որ լաւապէս պիտի
ներկայացնես մեզ .....ներուն մէջ:

- Լուրջ գրագէտ մը երբեք չ՚ենթարկուիր ..... ընելու փորձութեան:

4. Գործածէ՛ յարմար նախադասութեան մէջ՝ տալով ճշգրիտ իմաստը.-
օ փոխադրել օ փոխանցել օ փոխանակել օ փոխարինել օ փոխադարձել

- Դուք պատգամը .....ի՞ք պահակներուն. այո՞: Բայց անոնք չէին
կատարած մեր հրահանգը՝ հին տուփերը .....ու նորերով եւ կառքով
զանոնք .....ու մինչեւ ծովափ:

- Ձեր ընկերներուն հանդիպեցաք, դրոշմաթուղթի շարքեր .....իք, եւ
իրենց մաղթանքներուն .....իք նոյնքան ազնիւ ձեւով:

5. Բերանացի բացատրէ՛ ամէն մէկ բառի իմաստը. ապա գրաւոր կազմէ՛ մէկական նախադասութիւն.-
օ ազգայնական օ ազգագրական օ ազգամիջեան օ միջազգային օ համազգային

6. Գործածէ՛ բոլոր բառերը, ամէն մէկը՝ իր տեղը.-
ա- ցուպ եւ *մական*
բ- համառօտ եւ *կտրուկ*
գ- հեկեկոց եւ *լաց*
դ- օրհնութիւն եւ *մաղթանք*
ե- պարունակութիւն եւ *բովանդակութիւն*

ա. Կրօնական պետի ..... եւ հովիւի .....ը երկուքն ալ «հօտ»
կը վարեն - բայց այս բառին տարբեր իմաստներով:

բ. Սպան ..... շեշտով հրահանգեց, որ մէկ վայրկեաննոց ..... զեկուցում մը տամ:

գ. .....ի ձայն չէր լսուեր. երբեմն միայն զսպուած ..... մը կը հասնէր ականջին:

դ. Մամիկը պզտիկներուն ջերմեռանդ .....ներ կու տար, իսկ մեծերը բարի տարուան մը .....ներ կը փոխանակէին:

ե. Մտքին .....ը կը նմանցնեն ամանի մը .....եան. բայց ասիկա պարզ բաղդատութիւն մըն է:

7. Դի՛ր դէմ դէմի՝ ասոյթ (ասոնց տեղը ճշդուած է դասին մէջ) **եւ բացատրութիւն.-**
- Ասոյթ.- ակռայ կրճտել (մաս 1) օ փնտռել տալ (1) օ բացէն եկամուտ ապահովել (2) օ դող ելլել (3) օ իրաւունքը ուտել (5) օ քիթ-բերան ծռմռել (6)
- Բացատրութիւն.- վախնալ օ անիրաւել օ դժգոհիլ օ (ուրիշէ մը) աւելի գէշ ըլլալ օ զայրոյթ զգալ օ անարդար-անաշխատ շահ ընել

8. Շարադրութիւն

ա. նիւթ.-

- Հեղինակը բարեկամի մը ամփոփ ձեւով կը գրէ Թորոսին դժբախտութեան մասին, իբր ականատես՝ պանդուխտներու կացարանին վիճակն ու հոն պատահածները, իսկ միւս տեսարանները՝ իբր թէ քաղելով գիւղացիներու պատմածներէն: Դէպքերու պատումէն անդին՝ փորձէ՛ իր փոխարէն «զգալ» եւ վերարտադրել զգացումները՝ գտնելով յարմար շեշտ ու եղանակ:

բ. նիւթ.-

- Երեւակայէ՛ դատավարութիւն մը, երկրի մը մէջ, ուր բաւական արդարութիւն կայ՝ Մելքոնի բողոքը գոնէ լսելի ընելու չափ: Գրելիքդ՝ գիւղացիներու փաստաբանին ամբաստանագիրն է. ամուր եւ լաւ մտածուած գրութիւն մը, որ բոլոր ձեւերով պէտք է օգտակար ըլլայ պաշտպանեալներուդ: